ԻՄՊԵՌԱՆ

Դավիթ Գեորգյան

ԻՄՊԵՌՎԱՍ

Վեպ

ԵՐԵՎԱՆ
2026

ՀՏԴ 821.19-31 Գեորգյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Գ 479

Գեորգյան Դ.
Գ 479 Իմպեդանս: Վեպ / Դ. Գեորգյան.- Եր.:
Newmag, 2026.- 240 էջ:

1956 թվական. ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության հատուկ որոշմամբ Հայաստանում ձևավորվում է գերգաղտնի, գետնափոր ռազմական լաբորատորիա: Երկու տարբեր աշխարհամասերից այստեղ են գործուղվում երկու երիտասարդ հայեր:

Առաջինը՝ Ռուսաստանից: Գնդապետ Ավակովը ժամանում է որպես լաբորատորիայի հրամանատար:

Երկրորդը՝ ԱՄՆ-ից: ԿՀՎ-ն ՀԽՍՀ է ուղարկում գործակալ Ադիխանյանին: Նա պետք է սողոսկի լաբորատորիա, որտեղ ամեն ձայն, ամեն շարժում, ամեն բացված դուռ կարող է անդառնալիության սկիզբ դառնալ:

Գնդապետ Ավակովը կիրագործի իր առաքելությունը, կստեղծի միջուկային զենք: Իր կյանքը խաղասեղանին դրած գործակալ Ադիխանյանը կկարողանա կորզել գերգաղտնի ինֆորմացիան:

Միստիկայի էլեմենտներով գործակալական այս թրիլերում լաբորատորիայի մետաղե ծանր դռան հետևում են մնում այն բոլոր որոշումները, որոնք մարդկանց ճակատագրերի գին ունեն:

ՀՏԴ 821.19-31 Գեորգյան
ԳՄԴ 84(5Հ)-44

Գրքի գլխավոր գործընկեր՝
«Թովմասյան» հիմնադրամ
tovmasyanfoundation.com

TOVMASYAN FOUNDATION

ISBN 978-9939-482-10-1
Դավիթ Գեորգյան, «Իմպեդանս» © 2026, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 | Գործուղումն ու դաշնամուրը 7

ԳԼՈՒԽ 2 | Կարենի մորաքրոջ տղան 35

ԳԼՈՒԽ 3 | Ցուցադրական պատիժ 59

ԳԼՈՒԽ 4 | Անուշաբույր թաշկինակը 81

ԳԼՈՒԽ 5 | Նամակ Մոսկվայից 103

ԳԼՈՒԽ 6 | Կաթի շշերը 129

ԳԼՈՒԽ 7 | Միքայելն ու լիճը 149

ԳԼՈՒԽ 8 | Օբսիդիանե բրգաձև քարը 169

ԳԼՈՒԽ 9 | Ոսկեգույն արևածագի եղբայրությունը 195

ԳԼՈՒԽ 10 | Արծաթե մատանին 231

ԳԼՈՒԽ 1

Գործուղումն ու դաշնամուրը

— Ներս եկեք,– ձայն տվեց գեներալը:

Աշխատասենյակի փայտե ծանր դուռը սահուն բացվեց: Գնդապետը, սառը քրտինքը ճակատին, ներս մտավ ու մեխվեց տեղում:

— Թո՛ւյլ կտաք,– գնդապետի ձայնն արձագանքեց բարձր առաստաղով սենյակում:

— Առաջացի՛ր, նստի՛ր,– ցածրաձայն ու տիրաբար ասաց սենյակի անկյունում երևացող ստվերը:

Գնդապետը մոտեցավ սենյակի անկյունում դրված մեծ սեղանին ու կանգ առավ: Գնդապետն անթարթ նայում էր իր դիմաց: Սենյակով մեկ տարածվել էր թանկ ծխախոտի բույրը:

Մինչև առաստաղ հասնող լայն պատուհանները կիսով չափ փակված էին գորշ կանաչ վարագույրներով: Արևի շողերը հազիվ ներթափանցում էին սենյակ, սակայն աշխատասեղանի մոտ նստած մարդու դեմքը լավ չէր երևում:

Նա շնչում էր խորը և համաչափ՝ թաքցնելով իրեն պարուրած ծանր մտքերը:

Սեղանի մյուս կողմում նստած ստվերն արտաշնչեց ծխախոտի թանձր ծուխը՝ ողողելով սենյակը հազիվ լուսավորող տկար շողերը: Հրամանատարի ներկայությունն ինչ-որ պահի

անիրական էր թվում, ստվերների մեջ թաքնված նրա գոյությունը մատնում էին միայն ուսերին շողացող գեներալի խոշոր ինգաթև աստղերն ու գրչի կոպիտ հպումները՝ դիմացը դրված դեղնավուն թղթին: Դրսում՝ պատուհանից այն կողմ, եղանակին ոչ բնորոշ փոթորիկը սուլոցով փորձում էր շինության բակում աճող կաղնիների տերևների ամրությունը, հրամանատարն անշտապ ու իրեն հատուկ հանդարտությամբ շարունակում էր գրել: Մեկ ոտքի վրա հենված գնդապետի մկանները տեղի տվեցին, ու նա հենվեց մյուս ոտքին: Դա որպես անհամբերության դրսևորում ընկալելով՝ հրամանատարը վայր դրեց գրիչն ու բարձրացրեց գլուխը:

— Ինչպե՞ս հասաք, շմ՛ետ եք հոգնել,– հարցրեց հոգատար տոնով:

— Ամեն ինչ լավ է, ընկեր գեներալ, շնորհակալ եմ:

— Այդպես մի՛ լարվիր, գնդապետ, դու պատժի չես ներկայացել: Ավելին, սա քեզ համար հիանալի հնարավորություն է:

Գնդապետի աչքի առաջ հայտնվեցին կնոջ առօրյա դժգոհությունները, նոր լվացքի մեքենա գնելու պահանջները, տարիներ շարունակ ձգվող ընտանեկան վեճերը:

Գեներալը մետաղական կնիքը կտրուկ շարժումով սեղմեց փաստաթղթին, նորից կարդաց գրածը, ստուգեց իր ստորագրության վրա դաջված կնիքի հետքը, թուղթը հրեց գնդապետի կողմն ու ասաց.

— Եթե հիշողությունս չի դավաճանում, հայ ես, չէ՞, գնդապետ Ավակով:

— Ճիշտ այդպես, ընկեր գեներալ, հայ եմ:

Գեներալը, որ նախապես արդեն գիտեր բոլոր պատասխանները, շարունակեց.

— Վերջին անգամ ե՞րբ ես եղել հայրենիքում:

— Երբեք, ընկեր գեներալ: Մեր մեծ տերության այլ տարածքում եմ ծնվել:

— Ուրեմն, սա հրաշալի հնարավորություն է քեզ համար. կգնաս ու կծանոթանաս հայրենիքիդ,– ժպտալով ասաց գեներալն ու շարունակեց, – մանրամասները կիմանաս, երբ կարդաս հրամանը:

Գնդապետ Ավակովը վերցրեց թուղթը: Ճակատին հայտնված քրտինքի կաթիլը պոկվեց, կաթեց հենց հրամանի վրա:

— Ձեռագիր օրինակը կարող ես քեզ մոտ պահել, բայց կադրերի բաժին կփոխանցես, որ արխիվացման համար տպագիր տարբերակ պատրաստեն:

— Լսում եմ, ընկեր գեներալ:

— Դեմքիդ երջանկություն չեմ տեսնում, Ավակո՛վ. ի՞նչ է, չե՞ս ցանկանում գործուղվել հայրենիք:

— Հրամանները չեն քննարկվում, ընկեր գեներալ:

— Մի՛ անհանգստացիր, կինդ դժգոհելու պատճառ չի ունենա, քեզ կապահովենք մեծ բնակարանով: Արդեն հանձնարարել եմ, որ իրերդ նախկին ծառայությանդ վայրից միանգամից տեղափոխեն նոր աշխատավայր: Տղադ էլ կգնա հայկական դպրոց, հայերեն կսովորի, մի՞թե հրաշալի չէ:

— Ճիշտ այդպես, ընկեր գեներալ, ամեն ինչ հրաշալի է:

— Գնդապե՛տ Ավակով, քեզ չափազանց կարևոր գործ ենք վստահել, և դու մեզ հիասթափեցնելու հնարավորություն կամ հետդարձի ճանապարհ չունես: Հիմա ազատ ես, կարող ես գնալ:

— Լսում եմ,– հպարտ պատվի առնելով՝ Ավակովը դուրս եկավ սենյակից:

Դրսում քամին հաղթեց կաղնու ճյուղին կառչած դեղին տերևին, ու այն պտույտներ գործեց օդի մեջ՝ անցնելով գեներալի սառած հայացքի առջևով ու ընկնելով տերևաթափ հողի վրա:

Ավակովը խորը շունչ քաշեց ու նախամուտքի հայելու դիմաց նորից կարգի բերեց համազգեստը: Ուզում էր համոզվել, որ հրամանատարի առջև պատշաճ տեսքով էր կանգնած:

Հրամանագիրը ճմռթվել էր Ավակովի լարված բռունցքի մեջ: Հիմա, երբ հարաբերական հանգիստ միջավայրում էր, նայեց ձեռքում ամուր պահած փաստաթղթին, ապա ուղղեց այն՝ անտեսելով գեներալի քարտուղարուհու հեգնական հայացքը: Դուրս եկավ երկար ու մռայլ միջանցք, քայլերն ուղղեց դեպի կադրերի բաժին: Միանման աշխատասենյակների դռներն իրարից տարբերվում էին ոսկեգույն վահանակներով, որոնց վրա միանման տառերով դաջված էին ազգանուններ: Գուցե գեներալի ներկայությունն էր պատճառը, որ միջանցքում նույնիսկ ճանճի տզզոց չէր լսվում: Լռության մեջ արձագանքում էին միայն Ավակովի՝ խնամքով փայլեցրած կոշիկների կրունկները: Գործավարության սենյակի դուռն Ավակովը հարկ չհամարեց թակել, սեղմեց կիսաժանգոտած բռնակը, ներս մտավ ու հրամանատարական կեցվածքով, ինքնավստահ կանգնեց գործավարության աշխատակիցների դիմաց: Երիտասարդ աղջիկները մեխանիկորեն ուղղվեցին, գրամեքենայի դիմաց նստած խոշոր ակնոցով երիտասարդը ձևացրեց, թե չի նկատում, որ սենյակում մարդ է հայտնվել: Ավակովի ներս մտնելը նկատեց ու չահաբեկվեց միայն մի տիկին. նա նստած էր պատուհանի տակ դրված կաշվե բազկաթոռին, շեկ մազերը գալարվում էին նրա շպարված

դեմքի շուրջբոլորը: Տիկնոջ ինքնավստահ կեցվածքն Ավակովին դրդեց դիմել հենց նրան:

— Դուք եք գործավարության ավագ սպան,– հարցրեց նրան Ավակովը:

— Օ՛հ,– արհեստական ժպիտով պատասխանեց տիկինը, – սիրելի՛ս, երանի թե սպա լինեի: Ես ընդամենը գործավարության պատասխանատուն եմ:

Ավակովն անցավ դեպի դռան դիմաց դրված, ռեստորանի բար հիշեցնող սեղանն ու ճմռթված թուղթը պարզեց տիկնոջը.

— Գեներալը հրահանգել է, որ այս հրամանի մեքենագիր օրինակը Ձեզ մոտ պահեք:

Շեկ մազերով տիկինը, ակնոցն ուղղելով, նայեց թղթին, հետո նայեց Ավակովին ու շրջվեց նեղ սենյակում տեղավորված աղջիկներից մեկին.

— Գնդապետին սուրճ հյուրասիրեք, մինչև սրանով զբաղվեմ:

— Լսում եմ, ընկեր Նինա,– հապճեպ ասաց աղջիկներից մեկն ու դուրս եկավ սենյակից:

— Կարող եք նստել, ընկեր գնդապետ,– տիկին Նինան ասաց մի տոնով, որով սովորաբար չեն խոսում գնդապետների հետ, – որոշ ժամանակ է պետք:

— Այստեղ ծխո՞ւմ են,– շուրջը նայելով ու հավանաբար մոխրաման փնտրելով՝ հարցրեց Ավակովը:

— Աստղերի մեծությունից է կախված,– քմծիծաղ տվեց տիկին Նինան՝ նայելով Ավակովի աչքերին:

Ավակովը տեղավորվեց սեղանի մյուս կողմում դրված աթոռին, հետո գրպանից հանեց «Բելամորի» կիսատ տուփն ու ծխախոտը մոտեցրեց քթին, հոտոտեց: Հին սովորություն էր. ամեն անգամ հոտոտում էր, հետո՝ կպցնում:

Տիկին Նինայի մատները սահում էին գրամեքենայի ստեղների վրայով, ու տառերը հատու կտկտոցով հայտնվում էին դատարկ թղթի երեսին:

Ավակովն ինքնամոռաց ծխում էր: Մտքերով Տուլայում էր, որտեղ, գեներալի խոսքով, իր ընտանիքն արդեն ճամպրուկներն էր դասավորում: Անծանոթ մարդիկ պիտի իր հյուրասենյակում սպասեին, մինչև կինը դասավորեր իրերը: Եթե ինքն այնտեղ լիներ, գուցե նայեր հյուրասենյակի հին դաշնամուրին: Միակ առարկան, որ կնոջ՝ Անահիտի՝ աշխարհիկ կյանքից այդքան հեռու ապրելու սփոփանքն էր: Նոր քաղաքում այդպիսի դաշնամուր չէր գտնվի: Գեներալը շռայլ կլիներ այնքան, որ դաշնամուրը հազարավոր կիլոմետրեր կտրելով տեղափոխեին Հայաստան:

Փոքրիկ սենյակում ծխախոտի ծխի հետ ծանրացել էր Ավակովի կենցաղային հոգսերի բեռը: Անահիտն արժանի էր բարեկեցիկ կյանքի: Ծխախոտի այրման մեղմ ճռճռոցը, ներշնչած ծուխն ու տիկին Նինայի մատների սահուն շարժումների կտկտոցը ձուլվել էին իրար: Անահիտը բարձրաշխարհիկ էր, նա՝ ուր, Տուլան՝ ուր, հիմա էլ հերթական նոր քաղաքը: Ուսադիրների ծանրությունն ուր որ է կկոտրեր ողնաշարը:

Սեղանի տակից սուրճի բաժակի փոքրիկ ափսե հանելով՝ տիկին Նինան այն հրեց Ավակովի ուղղությամբ:

— Մոխիրը ծանրացել է ծխախոտի վրա, ընկեր գնդապետ,– ասաց սթափեցնող տոնով:

Ավակովը նայեց ծխախոտի վրա կորացած ծանր մոխրին, ապա փոքր ափսեի վրա հանգցրած նախորդ ծխախոտների հետքերին ու մոխիրը թափ տվեց:

— Ձեր ընտրած ճանապարհն է, մի՛ ծանրացրեք,– հրամանի բովանդակությունն աչքի տակով արդեն անցկացրած ու կարծես ամեն ինչ հասկանալով՝ ասաց տիկին Նինան:

Ավակովը բարձրացրեց հայացքը, նայեց տիկնոջն ու պատրաստվում էր խայթող պատասխանով սաստել նրա հանդգնությունը, երբ սենյակի դուռը կտրուկ բացվեց, ու ներս մտավ երիտասարդ աղջիկը՝ սուրճի բաժակներով:

— Զգո՛ւյշ, մի՛ շտապիր,– հանգստացրեց տիկին Նինան, – Ավակովը մեր բարեկամն է, չի նեղանա, որ սուրճը մի քիչ սառչի:

Տիկին Նինան յուրահատուկ էր: Նա առանձնանում էր իր խոսքով ու թեթևությամբ: Ավակովը հասկացավ, որ օդում կախված այդ մռայլ ծուխն էլ, տրամադրությունն էլ նա կարող է ցրել իր հանդարտ վարքով՝ ասելով այն, ինչ պետք է բոլորին:

— Պատուհանն բացեք,– ասաց Ավակովը:

— Քանի՞ անգամ եք արդեն գործուղվել, ընկեր գնդապետ,– հարցրեց տիկին Նինան այնպես, որ Ավակովը նույնիսկ հարկ չհամարեց մտածել, թե պե՞տք է պատասխանել այդ հարցին:

Նա մոտ քաշեց սեղանի ծայրին թողած սուրճի բաժակը, որ թողել էր վախվորած հայացքով աղջիկը, ու ասաց.

— Այնքան, որ կինս հասցնի ատել ինձ:

Գրամեքենայի կտկտոցը դադարեց: Ավակովը մտածեց, որ ինչ-որ ավելորդ բան է ասել: Այդ ընթացքում տիկին Նինան դարակից հանեց ծխախոտի իր տուփն ու ինքնավստահ վառեց մեկը, հետո տուփը դրեց սեղանին: Ավակովը նայեց ճմռթած տուփին, կարդաց՝ «Ցուգոսլավիա Էքստրա» ու իր ծխախոտն այնպես պտտեց, որ «Բելամորը» չերևա:

— Կանայք չեն ատում իրենց ամուսիններին, ընկեր գնդապետ, նույնիսկ երբ ամուսինները զինվորական են. կանայք ատում են նրանց բացակայությունը,– ծուխն արտաշնչելով՝ արդեն մեկ ձեռքով շարունակեց տպել տիկին Նինան:

— Պարտադրված բացակայությունը,– հավելեց Ավակովն ու կում արեց սուրճի բաժակից:

— Ո՞վ իմանա: Այդ վարագույրի հետևում հեշտ է պարտադրվածն ու ցանկալին թաքցնելը, չէ՞:

Ավակովը ժպտաց ու ոչինչ չասաց: Քիչ անց, երբ սուրճի բաժակներն արդեն դատարկ էին, ու փոքրիկ ափսեի մեջ կողք կողքի հանգչում էին ծխախոտների երկու մնացորդները, տիկին Նինան մի հաստափոր մատյան հանեց, թերթեց ու գտավ վերջին էջը, համարակալեց, տպագիր օրինակն իրեն պահեց, ձեռագիրը տվեց գնդապետին:

— Ստորագրեք,– մատով ցույց տվեց տեղն ու մեկնեց գրիչը:

Ավակովը կարդաց՝ «Ընդունեց ենթասպա Սաֆրոնովան, հանձնեց գնդապետ Ավակովը»: Ստորագրեց իր անվան դիմաց, խնամքով ծալեց հրամանի իր օրինակն ու ոտքի կանգնեց:

— Դե,– ասաց՝ համազգեստն ուղղելով, – շնորհակալ եմ սուրճի համար:

— Համեցեք,– նույն հեգնական ժպիտով պատասխանեց տիկին Նինան:

Հաստ պատերով միջանցքն ամբողջ ուժով խեղդում էր Ավակովի ոտնաձայները: Աստիճաններով իջնելիս նա հայացքը չկտրեց գետնից: Միայն մի պահ կանգ առավ անցագրային կետի դիմաց, որ ստորագրի: Մինչ հերթապահը հաստափոր մատյանում կգտներ հրավիրյալ սպաների մուտքի

ու ելքի նշումները, Ավակովը նայեց դրոշի կողքին փակցված սպաների նկարներին ու այդ շարքերից մեկում՝ խիստ հայացքով մի նկարի տակ, կարդաց՝ «Գեներալ Ա. Ա. Սաֆրոնով»:

— Այստեղ ստորագրեք, ընկեր գնդապետ,– գտնելով անհրաժեշտ տողը՝ ասաց հերթապահը:

Արագ, առանց վարանելու Ավակովը ստորագրեց ու դուրս եկավ շենքից: Մինչև դարպասներին հասնելը բակում հասցրեց մի անգամ էլ ծխել: Ոտքերի տակ չոր տերևների կոտրվելու ձայների մեջ պատվի առավ դարպասը հսկող օրապահներին ու կորավ խաչմերուկի հակառակ կողմում:

Աշնանային սառը քամին ապտակի պես դաջվեց Ավակովի դեմքին: Նա գրպանից հանեց հրամանն ու համոզվելու համար մի անգամ էլ կարդաց կարևոր հատվածները.

«Հրամանը ստանալուն պես ուղևորվել Մոսկվայի կենտրոնական կայարան, հանդիպել մայոր Մեչինին»:

Նայեց շուրջն ու մտածեց, որ եթե մի փոքր ուշանա, դժվար թե հետևանքները ծանր լինեն: Խաչմերուկի մյուս կողմից ձեռքով գլխարկը գլխին պահած՝ վազելով մոտեցավ օրապահներից մեկը.

— Թռիլ կտաք դիմել, ընկեր գնդապետ:

— Ասա՛,– հեգնեց Ավակովը, բայց հեգնեց ոչ թե օրապահին, այլ իր բախտին, որ նույնիսկ մի բաժակ կոնյակ չի հասցնի խմել:

— Գեներալը հրամայել է Ձեզ փոխանցել, որ տեղափոխության բոլոր հարցերը լուծված են, ոչ մի բանի մասին չանհանգստանաք:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark